«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
Տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
Տնտեսագիտության դոկտոր

Դ.Վ.Հարությունյան
28 հոկտեմբերի 2022թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Վռամ Վլադիմիրի Կարապետյանի «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման հիմնախնդիրները ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Դավիթ Հարությունյան ՝ *տնտեսագիտության դոկտոր*, Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Աշոտ Մարկոսյան՝ *տնտեսագիտության դոկտոր, պրոֆ.*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Տաթևիկ Փարսադանյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Ստեփան Պապիկյան՝ *տեխնիկ.գիտ.թեկնածու*:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային շուկայում անընդհատ աճող մրցակցության պայմաններում աշխատանքի տարածաշրջանային բաժանման հիմնախնդիրները՝ իրենց

առանձնահատկություններով և օրինաչափություններով, մեծ հետաքրքրություն են առաջացնում տարբեր հետազոտողների ուսումնասիրությունների համար: Գիտատեխնիկական ժամանակակից փուլը բնութագրվում է հիմնարար փոփոխություններով, որն արտացոլվում է հատկապես անցումային տնտեսություն ունեցող երկրներում իրականացվող տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում: Վերջիններս հաճախ բախվում են արտադրություն արդյունավետության բարձրացման դժվարությունների հետ: Այդ դժվարությունները հաղթահարելի են տարածաշրջանային տնտեսական գործունեության ինտեգրման գործընթացների շնորհիվ, քանի որ տարածաշրջանի մասշտաբով տնտեսական գործունեության ինտեգրմանը զուգահեռ, աշխատանքի տարաժաշրջանային բաժանման և մասնագիտացման գործընթացները ստանում են գործնական բովանդակություն:

Աշխատանքի միջազգային բաժանումը հանգեցնում է նաև արտադրության մասնագիտացման խորացմանը և սերտ կապված է արտադրության կոոպերացման հետ: Վերջինս երկրների միջև հաստատում է տնտեսական կապեր, բարձրացնում է համագործակցության խորացման մակարդակը, որի միջոցով համատեղ ծրագրերի իրականացումը և արտադրության կազմակերպումը երաշխավորում է գործընկերության անկախություն և ինքնուրույնություն:

Եվրասիական տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացների զարգացման նպատակը ևս սիներգիկ էֆեկտ ապահովելն է, այսինքն այն պետք է հենվի ինտեգրացիոն խմբավորման երկրների մրցակցային առավելությունների համակարգային օգտագործման և տարածաշրջանային արժեքային շղթաների ձևավորման վրա:

Աշխատանքի տարածաշրջանային բաժանման և դրա հիման վրա տարածաշրջանային համագործակցության հիմնախնդիրների բացահայտումը, ԵԱՏՄ անդամ երկրների մրցակցային ներուժի լրիվ օգտագործման նոր մոտեցումների առաջադրումը խիստ հրատապ է, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է աշխատանքի տարածաշրջանային բաժանման նախադրյալների և օրինաչափությունների ուսումնասիրության հիման վրա, բացահայտել արտադրության մասնագիտացման և կոոպերացման ազդեցությունը ԵԱՏՄ երկրների երկարաժամկետ տնտեսական աճի և մրցունակության վրա:

Առաջադրված նպատակի իրականացման համար հետազոտության մեջ դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել և նկարագրել այն պայմանները, որոնց շրջանակներում ընթանում է աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացը և որոնք ազդեցություն են թողնում երկրների տնտեսական աճի վրա,
- ուսումնասիրել տարբեր ինտեգրացիոն միավորումների շրջանակներում աշխատանքի տարածաշրջանային բաժանման և մասնագիտացման օգուտների իրացման տեսական հայեցակարգերը,
- վերհանել աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործնական հիմնախնդիրները և ԵԱՏՄ անդամ երկրների արտահանման և ներմուծման համակենտրոնացման/դիվերսիֆիկացման ինդեքսների վերլուծության հիման վրա բացահայտել այդ երկրների արտադրական մասնագիտացման ոլորտները և արտադրական կոոպերացման հնարավորությունները,
- ԵԱՏՄ անդամ երկրների արտաքին առևտրային հոսքերի որակական և քանակական բնութագրիչների ուսումնասիրության հիման վրա, բացահայտել դրանց ազդեցությունը ինտեգրացիոն խմբավորման տնտեսական և արդյունաբերական զարգացման վրա,
- Տնտեսամաթեմատիկական մոդելի կառուցման միջոցով գնահատել ԵԱՏՄ երկրների միջև արտադրության կոոպերացման և տարածաշրջանային արժեքային շղթաների ձևավորման հնարավորությունները, ինչպես նաև բացահայտել միասնական արդյունաբերական քաղաքականության արդյունավետությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության ընթացքում ստացվել են մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են պարունակում.

1. Ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրները դասակարգվել են ըստ այն խմբերի, որոնք աշխատանքի տարածաշրջանային բաժանման և մասնագիտացման գործընթացներում՝ արտադրության արդյունավետության բարձրացման և ինտեգրացիոն խմբավորման տնտեսական աճի վրա ազդում են ելնելով իրենց բնաշխարհագրական առանձնահատկություններից և ռեսուրսաապահովվածությունից:

2. Միջազգային տնտեսագիտությունում կիրառվող՝ աշխատանքի միջազգային բաժանման գործընթացներում առանձին երկրների մասնագիտացման մակարդակը գնահատող ցուցանիշների ընդհանրացման հիման վրա մշակվել է աշխատանքի ճյուղային տարածաշրջանային բաժանման գործակիցը, որը թույլ է տալիս գնահատել ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների մասնակցությունը աշխատանքի տարածաշրջանային բաժանմանը:

3. Կոռելացիոն ռեգրեսիոն վերլուծության միջոցով կառուցվել է ԵԱՏՄ երկրների արտահանման դիվերսիֆիկացման/մասնագիտացման և բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ կախվածության ցրվածքի գծապատկերը, որը թույլ է տալիս բացահայտել, որ եթե ԵԱՏՄ բոլոր երկրների համար ավելի նախընտրելի է մասնագիտացման խորացումը, ապա Հայաստանը՝ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ աճի տեսանկյունից ունի արտահանման դիվերսիֆիկացման քաղաքականության որդեգրման կարիք:

4. VAR-Vector AutoRegression մոդելի օգտագործման միջոցով իրականացվել է ԵԱՏՄ երկրների արդյունաբերության ծավալների ցնցումների վերլուծություն, որը թույլ է տվել բացահայտել հետևյալ օրինաչափությունը. եթե նախկինում ներքին պահանջարկի բավարարման համար ՀՀ-ն ավելացնում է արդյունաբերական արտադրանքի ներմուծումը ՌԴ-ից, ապա այժմ արտադրանքը արտադրվում է ազգային տնտեսության շրջանակներում, ինչը բացասաբար է ազդում ՌԴ, հետևաբար և ԵԱՏՄ արդյունաբերության ծավալների աճի վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը հեղինակին թույլ է տվել ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիություն:

Ատենախոսության առաջին՝ «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման տեսական հիմնադրույթները» վերտառությամբ գլխում ներկայացված է աշխատանքի տարածաշրջանային բաժանման տնտեսագիտական բովանդակությունը, մասնագիտացումը և ինդուստրացումը, հնարավորությունների իրացումը ինտեգրացիոն խմբավորումների շրջանակներում, ինչպես նաև համաշխարհային փորձը:

Ատենախոսության երկրորդ՝ «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացները Եվրասիական տնտեսական միության շրջանակներում» վերտառությամբ գլխում հեղինակի կողմից վերլուծվել են ԵԱՏՄ երկրներում աշխատանքի տարածաշրջանային բաժանման վրա տնտեսական ինտեգրման ազդեցության մեթոդոլոգիական գնահատականը, երկրների միջև փոխադարձ առևտուրը, արտահանման դիվերսիֆիկացման ռազմավարությունը:

Ատենախոսության երրորդ՝ «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման հեռանկարները ԵԱՏՄ երկրներում» վերտառությամբ գլխում հիմնավորվել են՝ արտադրության արդյունավետության բարձրացման գործոնները՝ ԵԱՏՄ երկրների աշխատանքի տարածաշրջանային բաժանման համատեքստում, ՀՀ արտադրական մասնագիտացման գնահատումը տնտեսամաթեմատիկական մոդելի միջոցով՝ ԵԱՏՄ

անդամակցության համատեքստում, արտադրական կոոպերացիայի հեռանկարները ԵԱՏՄ երկրներում:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրակացություններ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունն իր դրական արժանիքներով հանդերձ զերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսության 2.3 ենթագլխում հեղինակը դիտարկում է արտահանման դիվերսիֆիկացման ռազմավարությունը՝ ներկայացնելով որոշակի եզրահանգումներ հիմնվելով 2012-2019թթ. ժամանակահատվածի փաստացի տվյալների վրա: Հեղինակը արձանագրում է նաև, որ Հայաստանը ունի արտահանման դիվերսիֆիկացման քաղաքականության որդեգրման կարիք (էջ 76): Այս միտքը, սակայն, հետագայում չի զարգացվում և ամրապնդվում առաջարկությունների տեսքով. մասնավորապես ի՞նչ քայլեր, միջոցառումներ են ակնկալվում այդ ուղղությամբ, որո՞նք են ՀՀ արտահանման բազմազանեցման նախընտրելի ուղղությունները և այլն:

2. Հեղինակը բացահայտել է, որ ԵԱՏՄ երկրների շարքում աշխատանքի վրա ամենամեծ ծախսերը կատարվում են ՀՀ-ում: Ռուսաստանի Դաշնությունում, Ղազախստանում և Ղրղզստանում այդ ցուցանիշը միջին մակարդակի վրա է, իսկ Բելառուսում աշխատուժի վրա կատարված ծախսերը նվազագույնն են (էջ 107): ՈՒսումնասիրության իրականացման ժամանակահատվածի համեմատ (որը ներառում է մինչև 2019 թվականը) կտրուկ փոփոխություններ են տեղի ունեցել ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեքում (2022թ.-ին տեղի է ունեցել դրամի արժևորում), ներկայումս էլ դրանք շարունակվում են, ինչի հիմնական պատճառներից մեկը հենց կապիտալի և աշխատուժի աննախադեպ ներհոսքն է ՌԴ-ից և ԵԱՏՄ երկրներից: Կարելի է կանխատեսել, որ ՀՀ-ում աշխատանքի վրա կատարված ծախսերը (ԱՄՆ դոլարով արտահայտված) ավելանալու են: Այս պարագայում ինչպե՞ս է Հայաստանի Հանրապետությունը իրացնելու իր մրցակցային առավելությունները: Ցանկալի է,

որպեսզի հեղինակը դիտարկեր սցենարներ, որոնք հիմնված կլինեն տեղի ունեցած փոփոխությունների, ինչպես նաև ներկայիս իրավիճակի վրա:

3. Աշխատանքի 3.2 ենթագլուխը՝ ՀՀ արտադրական մասնագիտացման գնահատումը տնտեսամաթեմատիկական մոդելի միջոցով՝ ԵԱՏՄ անդամակցության համատեքստում, հիմնված է 2013-2018 թվականների տվյալների վրա: Նույնը վերաբերում է աշխատանքի մյուս մասերին, որտեղ թվային տվյալները երկու-երեք տարվա վաղեմություն ունեն: Ցանկալի կլիներ, որ հեղինակը օգտագործեր ավելի արդիական տվյալներ, քանի որ պաշտոնական վիճակագրությունում արդեն իսկ դրանք առկա են:

4. Փոփոխվող աշխարհաքաղաքական և տարածաշրջանային նախասիրությունների պայմաններում հեղինակը կարող էր դիտարկել աշխատանքի և կապիտալի հնարավոր տեղաշարժերի մի շարք սցենարներ, որոնց (սցենարների) զարգացման հավանականությունը մեծ է և որոնք էական ազդեցություն կարող են ունենալ ԵԱՏՄ շրջանակներում Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցունակության, բացարձակ և հարաբերական առավելությունների իրացման վրա:

5. Նկատի ունենալով ԵԱՏՄ հիմնական գործընկեր և դերակատար ՌԴ հակամարտությունը Ուկրաինայի հետ, ինչպես նաև ՌԴ-ի նկատմաբ կիրառված համընդհանուր պատժամիջոցները, որոնք փոխում են այդ երկրի սոցիալ-տնտեսական ազդեցությունը ԵԱՏՄ տարածաշրջանում և հատկապես ՀՀ տնտեսության վրա՝ ցանկալի է, որպեսզի հեղինակը առնվազն եզրակացությունների մասում անդրադարձ կատարեր այդ զարգացումներին:

6. Կատարված աշխատանքում տեղ են գտել նաև վրիպակներ և տեխնիկական բնույթի բացթողումներ: Մասնավորապես էջ 94 կոոպերատիվ համագործակցության ինդեքսի փոխարեն պետք է լինի կոոպերացիոն համագործակցության ինդեքս, էջ 121-ում կոոպերատիվ ներուժի փոխարեն՝ կոոպերացիոն ներուժ, սեղմագրի ռուսալեզու բաժնում սխալ է նշված ատենախոսության պաշտպանության ամիսը և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողություններից ելնելով, կարող ենք եզրակացնել, որ աշխատանքը ունի որոշակի թերություններ, սակայն դրական եզրակացության համար կարող է հիմք հանդիսանալ այն փաստը, որ ատենախոսությունը ինքնուրույն աշխատանք է և

ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները արտացոլվել են հեղինակի վեց գիտական աշխատություններում և սեղմագրում:

Վռամ Վլադիմիրի Կարապետյանի «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման հիմնախնդիրները ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում» թեմայով ատենախոսությունը ներկայանում է որպես ամբողջական հետազոտություն, որտեղ դիտարկվել են ԵԱՏՄ համագործակցության համատեքստում արտադրության արդյունավետության բարձրացման, ՀՀ տնտեսական մասնագիտացման և կոոպերացիայի հեռանկարները:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 6 գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը և դրա խնդիրներին:

Այսպիսով՝ Վռամ Վլադիմիրի Կարապետյանի «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման հիմնախնդիրները ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում» թեմայով ատենախոսությունը բավարարում է ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, և ատենախոսության հեղինակը արժանի է Ը.00.06-«Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (28.10.2022թ., արձանագրություն թիվ 29):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու **Է.Մաթևոսյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ ավագ
գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու **Շ.Պողոսյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Է. Մաթևոսյանի և նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Շ. Պողոսյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ.քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, Ե.Ա.Հակոբյան
«28» հոկտեմբերի, 2022թ.
Կ.Տ.